



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



150

1999

ԿՐԹՈՒՑԿԱՆ
ԸՆԵՐԱԾՈՒՅՈՒՆ ԲԱՆԻՑ

ՊԱՍ կ.

ՏԱՅԱՐԻ ՔԱՐԵՐԸ

ի

Մ. ՎԱՐԴԱՊԵՏԵ ՄՈՒՐԱՏԵԱՆ
ՉԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԽՏԵ Ս. ՑԱԿՈՎՐԵԵՆԵ

ՀՐԱՄԱՆԱԿ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Տ. ԵՍՈՅ ՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ՅԵՐՈՒՍԱՂԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՑԱԿՈՎՐԵՆԵ

1876

Կ Ր Թ Ա Ր Ա Ն

ՄԵՏԱՐԵՆԵԿԵՆ ԲԵՆԵՑ

Պ Ա Ս Լ .

Տ Ա Ճ Ա Ր Ի Ք Ա Ր Ե Բ Ը

" Տեսանէք զայդ ամենայն " : Առաջ . հի . 2 :
Առաջ . ժի . 2 : Դաշտ . 1 : Համար . 6 :

Յ ի Ս Ո Ւ Ս Ի Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ի ս ո յ ն խօսքն մի
յանդիմանական խօսք է . բայց ոչ դա
ոքն , այլ ծանր և ազգու . Աշակերտ
ներն Յիսուսի հետ Տաճարն կը մըտ
նեն , շինութեան գեղեցիկութենէն , շր
քեղութենէն և հյափակապութենէն կը
յափշտակին , սակայն նոր չ'էր , որ կը
տեմնէին զայն , և լուութեամբ զար
մանալն բաւական չը համարելով՝ կը
հարցափորձեն իրենց Վարդապետն ,
կը հրապուրեն , որպէս զի նա եւս իւ
րենց պէս զարմանայ , նշմարել տալով ,
որ այս շենքն զարդարուած է գեղեցիկ

41440 - 60

ԴՊ. 1443

քարերով եւ աշտարակներով։ — Յիշ
սուս փոխանակ նոցա հետ զարմանա-
լու, ՚ի պատասխանի նոցա հարցման,
այսպէս կ'ասէ, « Այդ շնորհածքին կը
նայիք, — Տեսանէք զայդ ամենայն, ե-
կեսցեն աւուրք՝ յորս ոչ թողի սցդր
քար ՚ի քարի վերայ, որ ոչ քականո-
ցի »։

Եթէ կամենանք աշակերտներն ար-
դարացնել այսպէս պիտի ասենք, — Ե-
թէ նորա, որք Տաճարն շնորհին եւ
գեղեցիկ քարերով ունուերներով զար-
դարեցին, մեղաւոր չ'են, աշակերտ-
ներն եւս առաւել մեղաւոր չեն նոցա
ձեռակերտին վերայ զարմանալով։ Առ-
ուացին խնդիրն այս է, որ իմանամք
թէ պատշաճ էր արդեօք, որ սոյն չեն-
քըն գեղեցիկ լինի. Եթէ գեղեցիու-
թեան պատշաճաւորութիւնն ընդու-
նինք՝ զարմանալն նորա հետեւանքն է.
վասն զի գեղեցիկն շնորհած է արդէն
զգալու և զարմանալու համար։ Գե-
ղեցիութիւնն զգալն, գեղեցիութեան
վերայ զարմանալն այնչափ բնական է,

որ սոյն տպաւորութեան, դիմադրելն
անկարելի է։ Սոյն տաճարի շնորհն զար-
դարուած էր ամենայն Ճարտարու-
թեամբ. բան մի զանցառութեան տը-
րուած չէր, այնպէս որ տակաւին ներս
ըստած՝ սոյն սրբավայրի սեմէն իսկ
մարդ կը յափշտակուէր և կը սրանչա-
նար։ Կարող ենք ասել որ Մեծին Հերով-
դէսի ձեռքով շնորհած սոյն Տաճարն,
որ Զօրաբարելի շնորհած տաճարի տեղայն
վերայ էր, թէ մեծութեամբ, թէ շըե-
ղութեամբ և թէ փառաւորութիւն կը
գերազանցէր ոչ միայն երկրորդ, այլ նոյն
իսկ առաջին տաճարէն անդամ։ Տա-
ճարն շնորհած էր երեք տափարակնե-
րէն ամենէն բարձրագունի վերայ, ո-
րոնք միացած էին իրարու հետ ընդար-
ձակ աստիճաններով և սիրուն գաւիժ
մի կը ձեւացնէին երկկարդ և եռա-
կարդ սիւներով։ Սոյն միաւորուած
սիւնազարդ գաւիժներու վերայ կ'ե-
րեւէր սրբավայրի իսկական գաւիժն։
Այս վերջին գաւթիւնի անտառանման սիւ-
ներու մշշն անցնելով կը մտնէին Տա-

Ճարի մէջ, որոյ հարիւր կանգուն բարձր պատերն և նշնչափ լսյն շընապատն թանկագին մարմարինէ էին, որ կը փայլէր եւ կը փողփողէր իրբեւ ոսկի շողողուն։ Արբավայրն կը շընապատէն կողմնակի չէնքեր, յանկաւորութեամբ, երբակի յարկերով, և աւելի մեծութիւն կը տային Տաճարին։

Այսպահ մեծութիւն, այսքան շըեւ զութիւն, որոյ լոկ նկարագրութիւնն կը յափշտակէ զմարդ, միթէ կարող էր չաղել աշակերտաց երեւակայութեան վերայ, և միթէ պիտի չը ներէինք մենք, երբ կ'աղաղակեն։ Վարդապետ, տես թէ ի՞նչպիսի քարեր են, ի՞նչ նուերներ և որպիսի շինուած։

Թողունք հին տաճարի նկարագրութիւնն եւ ներկայի վերայ խօսինք։ Ո՞ր քրիստոնեայն է, որ չը զարմանար, երբ կը մտնէ մի հոյակապ եկեղեցւոյ մէջ, որ զարդարուած է ամենայն շըքեղութեամբ և փառաւոր ու հմտածարտարապետութեամբ։ Թէպէտ շինողներն մեռած են, բայց գողցես կը

խօսին տակաւելին։ գնդցես իրենց խորհուրդն ու մտածութիւնն միացած է իրենց ձեռակերտին հետ։ գնդցես նույա աստուածապաշտութեան շունչն կը նշի յամենուատէք և կը քարոզուի դարուց ՚ի դարս։ Ո՞ր քրիստոնեայն է, որ այս ամենն տեսնելով չ'ասէ իր մերձաւորին՝ աշակերտաց նման։ տես ի՞նչ գեղեցիկ քարեր են եւ ի՞նչ գեղեցիկ շինուած։ և զայս ասելով չ'ենթարկէ զինքն Տիրով յանդիմանական խօսքին։ “Այդ քարերու և շինուածի գեղեցիութեանն կը նայիք”։

Երբ մեր հոգին մերնայուածքն աւելի հեռի չերթար, եղբ մեր հոգին կանգ կ'առնուա այն տեղ, ուր մեր նայուածքն ստիպուած է կանգ առնուալ, երբ արտաքիննշաններն կամ նշանակներն, ձեւերըն և տիսաննելի իրերն մեր հոգին կը գերեն, երբ արուեստի շքեղութիւններն մեր սիրան երկրի հետ կը կապեն փոխանակ դէպ ՚ի երկինքն բարձրանալու, միովլբանիւ երբ մեր հոգին մեր նայուածքն առաւելութիւն չ'ունի,

միթէ Յիսուս Քրիստոս յանդիմանելլաւ
իրաւունք չննի : Այս պատճառաւ աւ
էր, որ Յիսուս Քրիստոս յանդիմանեց
իւր աշակերտներն : Նա կարգաց նու-
ցա սիրան ու միտքն . նա տեսաւ նու-
ցա հոգւոյն մէջ ցանկութիւն մարմ-
նոց, ցանկութիւն աշաց և հպարտու-
թիւն կենաց . որոնք մթութեան երեք
շղթաներ են , սոտիք Աստուծոյ թըլչ
նամին պինդ կը կատէ զմեզ արտաքին
խաւարի հետ : Յիսուս կը տեսնէր որ
աշակերտաց զարմացման մէջ, աշակեր-
տաց բացագանցութեան մէջ հաւասա-
րապէս կը խօսէին մարդն և Հրէայն :
Մարդն՝ որ յափշտակուած էր ամեն
քանով, ինչ որ կ'երեւէր . և կ'արհա-
մարհէր, ինչ որ չ'էր երեւիր . Հրէայն՝
որ կը պարձէր արտաքին շքեղութեամբ
կրօնական պաշտաման , որոյ ներքին
խորհուրդն , ներքին իմաստն վաղուց
արդէն խուսափած էին իւր սրտէն և
մորքէն և ինքն յամառաւթեամբ կա-
պուած էր օրինաց հետ , այսինքն ըս-
տուերի հետ , և այս այն վայրկինին ,

յորում սցն օրէնքն ամեն ժամանակէն
աւելի ստուեր էր . վասն զի ամենայն
ինչ լրումն առած էր գալստեամբ Յի-
սուսի Քրիստոսի : Կը տեսնէր ահա
Յիսուս աշակերտաց հոգւոյն մէջ մար-
դըն իւր ցանկութեամբ և Հրէայն իւր
պարձենկատութեամբ . ուստի և կ'ա-
մէր . “ Այս քարերուն և շնուածին կը
նայիք : Ի՞նչ են այս քարերն , եթէ ոչ
փոշոյ եւ աւազի համիկներ , որոնք
այն պատճառաւ միայն մեծ կ'երեւին ,
որովհետեւ դուք փոքր էք : Ի՞նչ են այս
նուերներն , որոնք կամ երկիւղիւ , կամ
մասփառութեամբ , եւ կամ սովորու-
թեամբ , բռնի կորզուած են այն հոգիւ
ներէն , որոնք ըս կամեցան զինքեանս
Աստուծոյ նուեիրել : Ի՞նչ է այս մար-
մարփոններու , ոսկեգրաւագներու եւ
այս ամեն զարգերու փայլուն պատ-
րանքն , որոց բարեպաշտական իմաս-
տըն վաղուց արդէն մոռցուած է : Այս
անոտի շքեղութեանց կը նայիք . այս է ,
որ ձեր սիրտն գրաւած և յափշտա-
կած է :

Բաց յայսմանէ մի պարագայ եւս
կար, որ մասնաւորապէս պատեհուա-
թիւն կընծայէր Տիրոջ յանդիմանա-
կան խօսքերուն: Յիսուս ինքն ևս Տա-
ճարէն ենելով մի քան տեսած և ա-
շակիւրտներուն ցցց տուած էր, որոնք
առանց Յիսուսի և ոչ նայելու անդամ՝
արժանի պիտի համարէին: Ի՞նչ էր այս,
Եղբարք, ով էր, որ Յիսուսի նայուածքն
ու ուշադրութիւն իւրվերայ գրաւած էր:

Այ էր մի աղքատ կին, որ ողոր-
մութեան գանձանակին մէջ ձգած էր
մի լումայ, այսինքն ինչ որ ունէր եւ
կարեւոր էր իրեն, զայն կարօտելոց
օգնութեան նուիրած էր: Յիսուս Քը-
րիստոս նշմարէլ տուած էր իւր աշա-
կերտաց սոյն առատաձեռնութիւնն,
որ ըստ իւր գատաղութեան, աւելի
մեծ էր քան հարստութեան ամենա-
ռատ տուրքերն: Այն ինչ Յիսուս ։
մարդասիրութեան սցն սրտաշարք օ-
րինակն աշակերտաց աչաց ներկայացու-
ցած էր, և այն ինչ մի պարզ և աղ-
դու խօսքով մոտածութեան գեղեցիկ

Նիւթ տուած էր աշակերտաց, ահա
այս փափուկ ժամոքն մէջ, և գողցես
՚ի պատասխանի Յիսուսի խօսքերուն,
աշակերտ եւս կը հրաւիրեն իրենց
Վարդապետն, որ իրենց հետ զարմա-
նայ Տաճարի շքեղութեան վերայ: Որ-
պէս թէ կամին ասել իրենց Վարդա-
պետին: — Դու զայն արժանի համա-
րեցիր ուշադրութեանդ և մեք զայս
արժանի համարեցինդ մեր ուշադրու-
թեան: Դու կը նայիս պարզ հոգւոյն,
որ զինքն կը նուիրէ: իսկ մեք կը նայինք
շքեղքարերուն: Քո սիրած տեսարա-
նին է բարյական մեծութիւնն ու
գեղեցիութիւնն: իսկ մեղ հաճելի տե-
սարանն է նիւթական գեղեցիութիւնն
ու մեծութիւնն: Հոգւով և ճշմար-
տութեամբ երկրպագութեան մի գոր-
ծն անդամ՝ կը յափշտակէ, կը կորպէ
զքեղ այս արտաքին պաշտաման իսա-
ռաւորութենէն, որ կը կատարուի սցն
շքապատին մէջ: իսկ զմեղ սոյն արտա-
քին շքեղութիւնն կը գրաւէ և մեր
տեսութիւնն գերելով կը հեռացնէ

այն հոգւով և ճշմարտութեամբ ասա
սուածպաշտութենէն, որով միայն կը
փառաւորի մեր Երկնաւոր Հայրն։ Եւ
ոչ միայն մեր բնազդումն կը աանի կը
հեռացնէ զմեղ այն կետէն, զոր դու
կը նշմարես, այլ այնքան յափշտակուած
ենք, որ նոյն իսկ քո ազդարարութիւնն
ներդ անկարող կը լինին դեպ ՚ի քո
դիտած կողմն դարձնել զմեղ։ Դու
ասացիր, ահա այն բանին վերայ պէտք
է զարմանալ ։ իսկ մեր կ'ասենք, ահա
այս բանին վերայ կը զարմանանք։

Այս խօսքերուն, այս մոտածմոնք
ներուն էր, որ պատասխանեց Յիսուս.
Այդ բանին կը նայիք, այդ կը զարմա-
ցընէ զձեղ։ Տակաւին քանի քանի
խօսքեր կարող էր յաւելու Յիսուս։
Ո՞րչափ պատրաստի փաստեր ունէր,
զօրս, եթէ պատշաճ դատէր, կարող
էր ՚ի կիր առնուլ և յանդիմանել թէ
աշակերտաց աղջութիւնն և թէ նոցա
դրաւումն ու մնութի զբաղրումն։ Բայց
Յիսուս ոչ շատ խօսքեր կը սիրէր և
ոչ փաստաբանել։ Մի հասարակ խօսք,

մի ապացոյց ՚ի միջոց բազմաց, բաւա-
կան կը համարէր նա, բայց ՚ի հարկէ
այս մի խօսքն եւս միշտ վճռական էր
և հատու, միշտ ուժգին էր և աղդե-
ցիկ, միով բանիւ, ինչպէս առ հասարակ
ասուած է ասսուածային խօսքերու
համար, կը թափանցէր մինչեւ սրտի և
մոքի յետին ծալքերն, մինչեւ ոսկե-
րաց յօդերն եւ ուղեղն։ Յիսուս մի
խօսք միայն կ'ասէ ուրեմն, և ահա նոյն
խօսքն։ “Եկեցեն աւուրք, յորս ոչ
մնասցէ այդք քար ՚ի քարի վերայ, որ
ոչ քակտեսցի”։

Այս յիշուած քայքայումն, այս
աւերն ու կօրծանումն յանկարծադէպ
է, ուժգին և սոսկալի։ Սա այն աւերն
չէ, զոր տարիներն ու դարերն կ'անեն
անզգալի կերպիւ։ Այս աւերումն
այնպիսի մի թշնամուց գործ պիտի լի-
նի, որ ժամանակի թշնամութենէն,
ժամանակի սպառումէն աւելի ան-
համբեր է։ Եւ որովհետեւ ոչ ոքի
մոքէն չ'անցնիր, որ սոյն Տաճարն քա-
կուի այն ժողովրդեան ձեռքով, որ

զայն կառուցած է, իրեն համար փառք
ու պարծանք կը համարի և կ'ընդունի
զայն իբրև վառարան աղբայիտութեան։
ուրեմն խօսքն մի այլ ժողովրդեան վե-
րայ է, մի արշաւանաց և աշխարհա-
կալութեան վերայ է։ Այս միակ խօս-
քըն իսկ կը բանայ աշակերտաց մտա-
ծութեան համար մի սոսկալ տեսաւ-
րան նախատանաց, աւերածոյ և ա-
հաւոր տառապանաց։ Այն խօսքն թե-
րեւս կը պարունակէ իւր մէջ նըրայե-
ցի անուան և ժողովրդեան սպառըս-
պուռ ննջան մարգարէութիւնն։ Աս-
տուածային մարգարէն մի կէտի վե-
րայ միայն լուսթիւն կը պահէ։ Նա
ք յայտնէր թէ երբ պիտի պատահին
այս բաներն։ “Եկեսցեն աւուրբ” ո
կ'ասէ նա . բայց իսկոյն աղատ թուիչ
տալով սոյն մարգարէութեանն, որ կ'ե-
ռայ իւր սրտին մէջ, նա խիստ լաւ կը
հասկացնէ նոցա թափանակ սրտերուն,
որ այս ապագան շատ հեռի չէ և այն
Տաճարն, որ տակաւին առողդ է բոլոր
յիշատակարանաց մէջ, քանզի յիսուն

տարի չլիս, որ շնուրած է, այս Տաճա-
րըն այլ եւս յիսուն տարի պիտի չը-
տեսնէ.

Սակայն եթէ Տաճարի կործանու-
մէն չ'ենթադրի անդամ՝ երկրի աւե-
րումն եւ ժողովրդեան սպառսպուռ
ննջումն, և եթէ այս բաներէն ոչ մինմա-
տալուտ լինի, դարձեալ Յիսուսի Քրիս-
տոսի պատասխանն ըլ կորուսանէր քնաւ-
իւր իմաստն ու զօրութիւնն։ Այն
պէս ընդունինք, որ իբր թէ Տաճարն
պիտի կործանի ոչ թէ յանկարծահաս
պատահարաւ, այլ յոլով տարիներու-
լուռ և դանդաղ յաջորդութեամք։
Սակայն ճշմարիտ է դարձեալ, որ երբ
կ'ասէ Յիսուս իւր ունկնդիպներուն
(որոնք ինքեանք իսկ գիտեն որ այնպէս
է) թէ պիտի գան օրեր, որ սոյն հո-
յակապ շնուրածի քարն քարի վերայ
պիտի ըլ մնայ, այս խօսքերով մեր Տէլն
լիովին կ'արգարացնէ սոյն ծանր եւ
քաղցր կշամքանիքն . “Այդ շնուրածի
մեծութեանն ու գեղեցիկութեամնն կը
նայիք” ո :

Արանչելի՞ խօսք , որ իւր մէջ կը
բովանդակէ ամեն ապացոյց : Յաւիւ-
տենականութիւնն ու ճշմարտութիւնն
անըաժման են , ինչպէս և ստութիւնն
ու խարիստութիւնն : Ինչ որ ճշմարիտ
է՝ յաւիտենական է . իսկ ինչ որ յաւի-
տենական չէ , էտոթիւն չունի , այլ
ըսկ երեւոյթ և անուն , Ամեն ինչ որ
կ'երեւի՛ Աստուած ստեղծած է չ'ե-
րեւցածներէն : Հոգին , որոյ վոռարանն
է Աստուած , յառաջ էր քանի զնիւթն
և էր առանց նիւթոյ : Նիւթն ստեղ-
ծուեցաւ միայն նորա համար , որ լինի
գործի ստեղծեալ հոգւոյ , լինի ձեւ
նորա կենդանութեան և առարկայ նո-
րա գործունէութիւնն : Բայց նիւթն
քնաւ ներփին բուն և բացարձակ ար-
ժէք չունի : Նիւթն իւր ունեցած բո-
րը արժէքն կ'ընդունի իւր նպատակէն
և իւր կիրառութենէն : Հոգին միայն ,
որ բղանած է Աստուծմէ , որ նման է Աս-
տուծոյ , որ ընդունակ է Աստուծոյ հետ
միանալու , հոգին միայն է անմահ .
վասն զի արժանի է անմահ լինելու :

Մի հատ հոգին բովանդակ աշխարհ
կ'արժէ , կամ աւելի պարզ ասենք , ոչ
միայն բովանդակ ներկայ աշխարհս ,
ոյլ եթէ սորա նման ուրիշ շատ աշ-
խարհներ եւս լինին , չեն կարող հա-
մեմատիլ և կըսուիլ մի հատ հոգւոյ
հետ : Հոգին միայն արժանի է մարդոյ
գլխաւոր ուշադրութեան . վասն զի
նա Աստուծոյ գլխաւոր ուշադրու-
թիւնն յինքն գրաւեց : Եւ քանի որ
հոգին և ամեն ինչ որ հոգւոյն կը վե-
րաբերին անտեսանելի են , կարող ենք
ասել ճշմարտութեամբ , որ միայն ան-
տեսանելի բաներն են արժանի զնութ-
եան , և կերպիւ իւիք , պէտք է իս-
պառ կօյր լինել միւս մնացած բանե-
րու համար :

Եւ ահա այս պատճառաւ այրի
կնոջ լուման , որ առանց ազաղակի և
հուշակի ոլորմութեան գանձանակն ըն-
կաւ , ուշադրութեան աւելի արժանի
էր քան մէ Տաճարի զարդերն և քա-
րերն : Այս մի լոկ լումայ չէր , այլ հո-
գւոյ միաներեւոյթ շարժումն , որ կ'ե-

բեւէր ողորմութեան սոյն լումային մէջ
Այս ներքին շարժումն էր, որ մեծ էր
գործէն, շատ մեծ էր նոյն իսկ Տաճա-
րէն և Տաճարի ամեն շքեղութենէն,
ամեն ատահճաններէն, գաւիժներէն,
կամարներէն, հսկայաձեւ պատերէն
և պարիսպներէն։ Եւ ոչ միայն այսչափ,
այլ բաղդատութեան առնուն անգամ
անիբաւութիւն է։ Ա. շակերտներն, ե-
թէ կամենան, կարող են սոյն Տաճարն
կառուցանող խորհուրդն համեմատել
այն խորհրդոյ հետ, որ այրի կնոջ ձեռ-
քէն դանին ՚ի գանձանակն ձգել կը
տայ։ Բայց աշակերտներն հեռի են
այսպիսի համեմատութեան վերայ մը-
տածելէն։ Եթէ մտածէին իսկ, մենք
նոյց համեմատութիւնն պիտի ընդու-
նէինք միայն այրի կնոջ գործն գովելու
համար։ Վասն զի այն պերճաշուք Իշ-
խանն, որ իւր գանձուց աւելորդով
կամ իւր հպատակաց յամրօքն յոսկի
փոխարկուած քրտինքով կանգնեց սոյն
Տաճարն, եթէ համեմատենք այս այրի
կնոջ հետ, որ ծածկաբար մարդասի-

դութեան գանձանակի մէջ կը ձգէ “ ի
կարօտութենէ իւրմէ զամենայն զիեա-
նըս իւր ո, ինչպէս կ’ասէ Յիառու Քը-
րիստոս։ Եթէ համեմատենք այս եր-
կունն, ինչ անհուն տարբերութիւն կը
տեսնենք։ Ո՞րչափ մեծ է այս աղքատ
այրին և ո՞րչափ փոքր է այս մեծ իշ-
խանն միահեծան։ ”

Իւրաքանչիւր անհատի հոգւոյ մէ-
ջըն է, որ պէտք է որոնել իւր մէն մի
գործոց խկական չափն ու Ճշմարիտ
անունն, կամ, այլապէս ասենք, հոգւոյ
գործքերն են միայն Ճշմարիտ գործքեր։
Այս այն գաղափարներէն մին է, որուն
զգայական առարկայից տիրապետու-
թիւնն ըստովուր որ հասնինք առանց
գժուարութեան եւ սակայն անհրա-
մէշու պէտք է որ զգայական տիրապե-
տութեանն յաղթենք և բարձրանանք
դէպ ՚ի հոգեկան գաղափարներն, եթէ
կը փափաքինք կեալ ըստ Ճշմարտու-
թեան և ըստ Աստուծոյ։ Մէք բացա-
ռիկ կերպիւ. և յատկապէս գործ կ’ա-
նուանենք ամեն պաշտօն, զոր կը կա-

տարէ մեր կամքն մեր ուժով կամ մեր
մարմնաւոր կարողութեան միջացաւ,
որով մեզմէն արտաքոյ որ և լցէ փոփո-
խութիւն մի կ'արտադրի : Իսկ գործ
չենք անուաներ, այլ մտածութիւն,
խորհուրդ, զգացումն, իղձ և փափաք
այն ամենն, ինչ որ կ'անցնի մեր հոգւոյ
մէջ, կամ ինչ որ կը կատարէ մեր հո-
գին առանց մարմնաւոր ուժոյ օգնու-
թեան և առանց որ և լցէ փոփոխու-
թիւն մի արտադրելու արտաքին աշ-
խարհի մէջ : Օրինակի համար, երբ
վճռական դիտաւորութիւններ կ'ու-
նենանք մենք և մեր կամքն անփախ
արգելքներով կատարումն կը խափա-
նուի, մեք կը կարծենք որ բնաւ չը
գործեցինք : Եւ ասկայն սոյն դիտաւո-
րութիւններն ոչ միայն գործքեր են,
(վկայ սյս բանիս մեր խիզճն, որ իս-
կոյն կը խայթէ զմեղ երբ վատ են),
այլ իսկապէս կատարուած ճշմարիտ
գործքեր են : Մեր արտաքին գործքե-
րըն միայն նշանակ և յայտնութիւն են
ներքնոյն և սրտերուն նայող և քննող

դատաւորի համար (յաշս որոյ արտա-
քին փոփոխումն կամ արտադրութիւ-
նըն մեծ նշանակութիւն չունի) ոչ այլ
ինչ են արտաքին գործքերն եթէ ոչ
աւելի զօրեղ կամ նուազ կերպիւ
յայտնուած շարժումներ մարմնաւոր
անդամոց : Մեր ոչ թէ պիսի գատ-
ուինք մեր նիւթական կամ արտաքին
գործքերով, այլ մեր 'ի ներքուստ կա-
մեցածներով — մեր հոգւոյ գործքերով :
Վասն զի, չէ ասուած թէ մենք վարձ
կամ պատիմ պիսի ընդունինք այն
գործոյն համար ինչ որ մարմնով գոր-
ծած ենք, այլ ինչ որ մարմնոյ մէջ կամ
հոգւով գործած ենք : Մեր արտաքին
գործքերն ներքնոյն ձեւերն են ու նը-
շակներն, յայտարարներն են ու վիա-
յութիւններն : Եւ այս իմաստիւէ, որ
չէ կարելի անտարբեր համարիլ այս
ինչ կամ այն ինչ գործած գործն . վա-
սըն զի, նախ՝ այս մի ապացոյց է, որ
մենք կամեցած ենք այս ինչ կամ այն
ինչ բանն . և երկրորդ՝ որ 'ի ներքուստ
ծնեալ սոյն գործքերն լաւ կամ վատ

աղդեցութիւն կ'ունենան անշուշտ
մեր ներքին մարդոյն վերայ, նայելով
ոյն գործոց լաւութեանն կամ վա-
տութեանն : Բայց պարտինք իմանալ,
որ ամեն ժամանակ մեր ներքին գործն
է, որ պիտի դատուի, սիրոն է, որ
պիտի քննուի : Եթէ այսպէս չըլինէր,
պիտի ասէինք ուրեմն թէ այն մարդն,
որ ներքին կարողութիւններ ունի, բայց
արտաքին գործելոց միջոցներէ զրկուած
է, պիտի չ'ենթարկուի դատաստանի .
և թէ՝ այն մարդն որ իւր յղացած և
կամեցած բարին և կամ չարն կարողա-
ցած չէ գործ դնել, հաշիւ պիտի չը
տայ ուրեմն նչ բարւոյն և նչ չարին
համար : Եթէ այսպէս ենթագրինք,
այնուհետեւ կ'ոչնչանայ ամեն պատաս-
խանատուութիւն եւ ամեն բարոյա-
կանութիւն : Բայց այսպէս չէ : Մարդն
արտաքին գործքերն կը դատէ . իսկ
Աստուած ներքինն . այս իմաստիւ է
որ հասարակօրէն կ'ասեն՝ Աստուած սիր-
ութն կը դատէ կամ սրբին կը նայի : Եւ մէր
ինչ մարդիկներս իսկ, միթէ մէք ևս,

ըստ մէր կարողութեան, սրտին չե՞նք
նայիր : Մի թէ հարիւրաւոր անդամ
դատաստան չե՞նք արած՝ թէ այս ինչ
ոճրագործն պակաս յանցաւոր է (ըստ
որում ակամայ գործած է, ինչ որ գոր-
ծած է) քան թէ այն ինչ պարզ յան-
ցաւորն, որ կամովին գործած է, ինչ
որ գործած է : Այսպէս ուրեմն, շա-
բունակելով գործ անուանիլ ինչ որ ա-
մեն մարդիկ կ'անուանեն, և հասարա-
կաց լեզուին մէջ իրարմէ որոշելով
գործն ու խորհուրդն կամ մոտածու-
թիւնն, իրաւունք ունինք ասելու, որ
իսկապէս մէր կամաւոր խորհուրդներն
են մէր Ճշմարիտ գործքերն, իսկ մէր
արտաքին գործքերն են միայն նշանակ-
ներ կամ յայտարարներ :

Աւելի լինդարձակինք այս իմաստն :
Ամենայն ինչ, որ արտաքին է, տեսա-
նելի և նիւթական, միայն լոկ նշանակ
է : Ճշմարիտ գործքերն միայն հոգւոյ
գործքերն են : Հոգին է, միայն որ իս-
կապէս կը գործէ : Իսկ այն փոփոխումը
ներն, որ արտաքոյ հոգւոյն կ'արտա-

գրին զգայարանաց միջոցաւ կամ զգաց յարանաց աշխարհի մէջ, այդ փոփոխութիւններն միայն զհոգին կ'արտայաց տեսն և ոչ այլ ինչ։ Ասքա գործքեր են դարձեալ։ ըստ վանականք սցն անունն տալու։ Բայց սպա ըսկ նշանական կամ երեւութական գործքեր են, սոքա մեր զգայութերու և կամեցաներու նըշաններն են, կամ մեր ներքին մարդկան գործ գնեցլու և հրահանգելու միջոցներ են, և այս բանիս մէջ է ահամ իւրենց կարեւորութիւնն։ Ինչ որ կը խօս սինք մեր գործոց վերայ, նոյնն պէտք է ասել նա և մեղմէն արատդրած բարի կամ չոր բաններու մասին։ Այս արտադրութիւններով չենք համարուիր մէք այն ինչ որ ենք. նոքա միայն արտայայտութիւնն են, միայն վեկայութիւնն են մեր ներքնոյն, միայն այս քան է իրենց կարեւորութիւնն։ Բայց սրպէս զի մեք նշանակին իրականութեան հետ ըստ շիտթենք և ոչ նշանն նշանակեալ իրին հետ խառնենք, ժամանակին կը կործանէ յաջորդաբար սոյն

նշանակիներն։ Այս մասին բնաւ խնայութիւն չըկայ, նիւթն ենթակայ է օրինաց նիւթցն, հողն ՚ի հող կը դառնայ. և մեր մարմինն, որ ոչ թէ մեր էութիւնն է, այլ միայն մեր ձեւն կամ արտաքին տեսին, մեր մարմինն իսկ, որ երեւութական աշխարհի առաջին մասն ու բաժինն է մեզ համար, առաջին առարկայն և առաջին գործին մեր արտաքին գործողութեան, այս մարմինն անդամ կը փոխի, կը մաշի, կը նուազի, կ'անկանի, եւ իւր տկաք և խախուտ յատկութեամբ իւր շարունակ մահուամբ, ամեն վայրկեան կը միշեցնէ մեզ, որ մեր էութեան կամ գյուղեան նկատմամբ, ստորակարգեալ է ինքն և միայն պատշաճաւորութեան համար կարեւորութիւնն ունի։

Հեռի է մեղմէն այն յիմարական ցնորդն, որով ոմանք յանդգնեցան տարակուսանաց ենթարկել նիւթոյ գյուղեանն և արտաքին աշխարհի իւրականութիւնն։ Հեռի է մեղմէն տիւ-

եղերաց սքանչելի երեւոյթներն առ
աջք տեսիլներ համարել։ Բայց պէտք
է խոստովանիլ, որ կայ մարդոց խղճին
մէջ մի բան, որ կը ստիպէտ անքակ եւ
անբաժան կերպիւ միացնել դոյուու-
թիւնն՝ գաղափարի հետ։ Մեծ ատե-
նախօս մի ասած է. « Ինչ որ պէտք է
միշրջանայ, հաղիւ թէ ելած է ոչնչու-
թենէ »։ Այն որ չէ ստեղծուած յա-
րատեւելու համար ի՞նչ կերպիւ, ինչ
անուամբ կարող էր մնալ և ապրիւ։
Միթէ կը սիստի Ա. Գիրքն, երբ կ'ա-
սէ. «Ապաքէն որպէս ՚ի պատկերի շրջի
մարդ »։ Միթէ սիստածն են այն հոգե-
խօս վարդապետներն, երբ մարդկանց
նայուածքն դէպ ՚ի աներեւոյթ աշ-
խարհն գարձնելով՝ շարունակ քարո-
զած են, շարունակ ստիպած են զայն
միայն խորհիլ, զայն միայն սիրել, այ-
նու միայն կապիլ, ինչ որ էական է և
իրական, ինչ որ լոկ ստուեր չէ և ե-
րեւոյթ ».

Ասենք համարձակ, որ, բառի կը
ըօնական իմաստիւ, մի միայն այն էա-

կան է և իրական, ինչ որ յաւիտենա-
կան է։ Ամեն բան, ինչ որ կ'եղանի,
ինչ որ կը բայ բայի, թէ մեր շուրջ և
թէ մեր մօտ (ընդ որս է և մեր մար-
մինն, որ մեզ մօտ է) բացարձակապէս
ոչինչ են, ստուեր անդամ չեն, վասն
զի ստուերն, թէև ստուեր, գարձեալ
ինչ է։ Ոչ ինչ են, ասացինք, այս ա-
մենն, և նշանակ անդամ չեն, վասն զի
նշանակն գարձեալ ինչ է։ Աստուած
կամի, որ բնաւ ըլ խաբուինք այս բա-
ներով և ահա այս պատճառաւ է, որ
փոփոխութեան օրէնքն, առանց մեծ
գըրդոցի, կը կրծէ և կը կործանէ ակ
ներեւ ամեն նշանակներ։ Ամենէն սուրբ
նշանակներն իսկ կ'անհատին իրենց
կարգին։ Այն Տաճարն իսկ, որոյ մե-
ծութեան և շքեղութեան վերայ կը
սքանչանային աշակերտներն, այն Տա-
ճարն եւս պիտի կործանէր։ Վրէժ-
խընդիր տնօրէնութիւնն աւելի պիտի
փութացնէր այս աւերման սոսկալի
կատարածն։ Եւ ի՞նչպէս կարող էր չը
կործանել մարդկային ձեռքով բարձ-

բացած սոյն Տաճարն , մինչդեռ Աստուած , իւր ձեռքով շնուած տաճարի համար անդամ կործանումն սահմանած է :

Տիեզերքն է առաջին ամենասուրբ և ամենաշքեղ տաճարն 'ի մէջ ամենայն տաճարաց : Այսպէս անուանել Տիեզերքն՝ կը նշանակէ իւր յատուկ անունն տալ , կը նշանակէ իրաւունք տալ նորա գյուղեթեանն : Վասն զի , Տիեզերքն եթէ տաճար չէ , հապա բնչէ : Արդ՝ այս տաճարն իսկ , որոյ Ճարտարապետն և հիմնադիրն ինքն Աստուած է , պէտք է քայլայի և աւերի . քանզի Աստուած այսպէս վճռած է : Երբ պղծուած է այն՝ բնչպէս կարող է մնալ : Նա , որ նոր Սամանն էր , (քայլ ամենայն սրբութեամբ հանդերձ , զոր չունէր հինն Սամանն) և անկաւ Աստուածոյ ժողովրդեան թշնամեաց ձեռքն , մի թէ կարող չըր իւր աստուածային ձեռքով շարժել սասանել անհուն շինուածոյն սիւներն և զը թողուլ իւր անմեղ կեանիքն Տիեզերաց փլատակնեւ

բուն ներքեւ : Նա այսպէս չ'արտւ . այլ միայն կործանման արհաւելիներ եւ նշաններ երեւեցան , որպէս զի մարդկութիւնն սթափի և հասկեայ թէ նոյն իսկ երկիրն , իւր բնակիցներով հանդերձ , ողորմութեամբ միայն կեայ . սասանեցան երկիր և երկինք , բայց հաստատեցան վերատին անխուով և շարունակեցին տեսնել՝ թէ բնչպէս օրերն գիշերներուն և գիշերներն օրերուն կը յաջորդեն . բնչպէս ծովն կը ծփայ , կը լեռնանոյ և կը դաշտանոյ աստեղաց աղդեցութեան տակ . և թէ բնչպէս աստեղը իսկ երկնքին մէջ կը կատարեն իրենց սովորական շրջանն : Բայց դատավճիռն յատպաղած է միայն : Երկիրն , իբրեւ ընդարձակ ծովու մէջ վառուած մի թշուառ նաւ , պէտք է իւր ընդարձակ նաւագնացութեան մէջ անհետի բոյերուն և փոլմորիկներուն մէջ և ինքն եւս դիսկ և փոշի դառնայ , այնքան դիսկներ և փոշիներ կլանելին եւ իւր մէջ խորասուզելին զինի և պէտք է մնայ իբրեւ մի յաւի-

աւենական տիսուր յիշատակ այն երկ-
նային հոգիններու յիշողութեան մէջ ,
որոնք նորա ծննդեան ներկայ գտնուե-
ցան և վախճանն տեսին : Ի՞նչ կ'ա-
սեմ , այս տաճարն իսկ , իւր շարժուն
և յողդողդ ձարտարապետութեամբ ,
ուր շատ փոքր տեղ կը գրաւէ երկիրն ,
այս տաճարն իսկ պէտք է գլուխին խո-
րասուզի բոցերու ովկիանոսին մէջ , որ
պէս զի այսպիսի մի գիւրին և արա-
գահաս կատարած դրոշմէ և տպաւո-
րէ ամեն ստեղծեալ հոգիններու վերայ
աստուածային տեսչութեան այս յա-
շխտենական սկզբունքն - Նիկուն ՀԱ-
ԳԻՈՅ ՀԱՄԱՐ , ԽՍԿ ՀՈԳԻՆ ՀՇՄԱՐ-
ՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ
ՀԱՄԱՐ :

Այսպէս ուրեմն , ինչպէս ոյն տա-
ճարի , նոյնպէս և միւս տաճարի քարն
քարի վերայ պիտի չը մնայ : “Այս բա-
նին կը նայիք դուք ուրեմն ո : Եւ ար-
դարեւ՝ եթէ այն բանին նայելու չէ ,
ինչ որ պէտք է եղանակի , միթէ նայե-

լու է աշխարհին , որ պիտի կործանի և
խապու կորնչի :

Ո՛վ համբերատար հետազօտիչներ
գաղտնեաց բնութեան , կ'ուղենիք ար-
դեօք դատապարտել զձեզ : — Ո՛չ բը-
նաւ . եթէ նիւթմի մէջ հոգի կ'որոնէք .
եթէ ի միջոց տեսանելցին զանուեան կը
զննէք . և եթէ տիեզերաց մէջ տիե-
զերաց Արարչին կը նայիք , ի հարկ է
անդատապարտելի էք . բայց եթէ այս
պէս չէ , անշուշտ Յիսուս Քրիստոս
ձեղ եւս կ'ասէ , ինչ որ աշակերտացն
ասաց . “Այդ արտաքին մեծութեանն
ու գեղեցկութիւնն կը նայիք ո : Ես
կը փափաքիմ , ոլ հետազօտիչք բնու-
թեան , որ ձեր զարմացումն աւելի
խոհուն լինի և ձեր հետազօտութիւնն
աւելի գիտնական : Բայց ի՞նչ օգուտ ,
եթէ ձեր հետազօտութիւնն կէս ճա-
նապարհին կանդ առնու և ձեր զար-
մացումն պատրի առարկաներալի : Հա-
մամիւ եմ ես , որ դուք զննէք այն ինչ
որ կը զննէք . բայց նայելու և զննելու
է վերէն և ոչ թէ վարէն : Մարդիկ ա-

մենայն ինչ վաստ կը տեսնեն և կամ ա-
նօդուտ կերպիւ կը տեսնեն, երբ Աս-
տուծով և յԱստուած չ'են տեսներ :
Բնութեան հրաշալեաց մէջ ի՞նչ բանի
վերայ կը զարմանաք գուք, եթէ չէք
տեսներ այն տեղ և չէք զարմանար Աս-
տուծոյ խորհրդեան վերայ, որ կը թա-
գաւորէ տիեզերաց մէջ : Բացատրե-
ցէք մեղ ձեր միտքն . մի թողուք, որ
կասկածինք եւ տարակուսինք ձեր մը-
տաց ուղղութեան վերայ : Եթէ ձեր
միտքն ըզ բացարկէք, միշտ պիտի ա-
սենք . “Այդ բանին կը նայիք, այդ
բանին վերայ կը զարմանաք” : Մի տը-
խուր և մահագոյժ խարոյի, մի խորհր-
դաւոր գերեզման կը ապաէ, կը լավիզէ
և կը կըանէ աստեղագիտաց աշխարհն,
քնագիտաց աշխարհն, երկրագիտաց աշ-
խարհն : Անդ, ուր աեղին է խակական
էութեան, անդ, ուր աղքիւրն է ձլը
մարիտ գոյութեան, անդ ըզ կայ բնաւ-
խնդիր շարժուն և փոփոխական երե-
ւութից նկատմամբ : Ամենայն ինչ
պիտի սպառի և միայն այն խորհուրդն,

պիտի մնայ, որ ծնաւ ձեր տմեն տե-
սածներն եւ ամենուն համար օրէնք
տահմանեց : Եթէ այս խորհուրդն չ'էք
ձեր տեսութեան եւ զնութեան ա-
ռարկան, ուրեմն ի՞նչ բանի նայեցաք :

“Աչ թէ տեսիլներուն և երեւոյթ-
ներուն նայեցանք, կ'ասէք դուք, այլ
տիեզերաց օրէնքներուն . և ահա իւ-
րաքանչիւր օրէնք խորհուրդ և մոտա-
ծութիւն է արդէն” : Մեք եւս այս
կըսպասէնք ձեզմէն : Ասացէք ուրեմն
հաստատապէս . թէ ի՞նչ է Աստուծոյ
խորհուրդն, ապա թէ ոչ, մենք պիտի
ասենք՝ թէ ի՞նչ է ձեր խորհուրդն ու
միտքն, ձեր կորովութիւնն ու սրա-
մառութիւնն, ձեր գիւտասէք ոգին, և
թէ հետեւապէս դուք միայն ձեղ նայ-
ած էք, այնպէս որ բովանդակի բնու-
թիւնն մի հայելի միայն եղած է ձեր մոտաց
ամբարտաւանութեան համար : Ի՞նչ
նայելու արքանի առարկայ է այն իմաս-
տութիւնն, որ ըզ կամիր զԱստուծած
ինդրել և փառաբանել : Ի՞նչ զար-
մացման արքանի նիւթ է այն մարդն,

որ կապուած չէ Աստուծոյ հետ։ Բայց
կը սիսալիմ ես։ Նայելու բաներ շատ
կան։ Հրէշներն եւս հրաշքներէն պա-
կաս իրաւունք չ'ունին, գոնէ առ վայր
մի, մեր զարհութեալ նայուածքն գլ-
րաւելու։ Այսպէս ուրիշն, այս աշ-
խարհին նայելէն եւ զԱստուած այն
տեղ չը տեսնելէն զինի՛ նայեցէք և զըն-
նեցէք նոյն իսկ նայուածքն։ Տիեզերաց
հրաշալիքներէն պակաս արժանի՛ նա-
ձեր ուշադրութեան։ Տիեզերքն եւս
կարող է նորան նայիլ։ Արարշագոր-
ծութիւնն, եթէ հոգի և ձայն ունե-
նար, պիտի աղաղակ բառնար այս
զարհութելի սքանչելիքն տեսած ժա-
մանակ։ Բնութիւնն շատ սքանչելիք-
ներ ունի։ բայց սորա նմանն չ'ունի։
Քանզի բնութեան հրէշներն անդամ
օրէնք մի ունին։ Իսկ այն հրէշն, ո-
րուն վերաց կը խօսինք մենք, այն սոս-
կալի հրէշ կամ հրաշալիքն է մարդոն
առանց Աստուծոյ, մարդն անաստուած,
զոր ոչ մի օրէնք կարէ բացատրել։
Մինչեւ ցարդ բացատրուած խօս-

քերն կ'առաջնորդեն մեղ Յիսուսի
Քրիստոսի խօսքերու մի կարեւոր բա-
ցատրութեանն ։ Կան շատ մարդիկ,
որք կ'արհամարհեն նիւթական մեծու-
թիւնն և տեսանելի շքեղութիւններն։
Այս շատ լաւ բայց ի՞նչ բանի վերայ
կը գարձնեն նոդա իրենց նայուածքն։
ի՞նչ առարկայի վերայ է նոցա զար-
մացումն։ Եթէ իմացականութեան,
կամ, ինչպէս սովոր են անուանել, մասց
վերայ է նոցա զարմացումն, պէտք է
իմանալ որ Յիսուսի Քրիստոսի կշտամ-
բանքն սյսպիսեաց եւս կը վերաբերի,
սոյց եւս կ'ասէ նա, « Այս է որ կը
զարմացնէ զձեղ։ այս բանին կը նա-
յէք »։

Իմացականութիւնն կամ միտքն,
իւր բոլոր արժանաւորութեամբ, այն-
չափ բարձր չէ նիւթէն որչափ ցած է
մարդասիրութենէն։ Սոյն տարբերու-
թիւնն կամ հեռաւորութեան չափն
յառաջ բերելով մենք նպատակ չ'ու-
նիք բնաւ բաժնել, ինչ որ Աստուած
միացուցած է։ Մենք գիտեմք որ սըր-

բութիւնն, կամ, ինչպէս ոմանք սովոր
են անուանել, բարյականութիւնն կատ
բող չէր գոյութիւն ունենալ առանց
իմացականութեան, վասն զի այն է ակն՝
որ ըստ խորհիր քնաւ, բարյական է ակ
չէ: Անզ պէտք է հաւատանք նմա-
նապէս, որ իմացականութիւնն միա-
ցած է գործարաններու հետ. վասն զի
գործունէութեան ժամանակ ինքն ևս
մի գործարան է. այնպէս որ մարդն իւր
լրութեամբն առնլով՝ է մի էակ միան-
գամայն ֆիզիդական, իմացական եւ
բարյական: Եթէ այս լրութենէն
կամ ամբողջութենէն մին կամ երկուսն
բառնանք, մարդն այլ եւս մարդ ըս-
տինիր: Սակայն որչափ որ իմացակա-
նութիւնն սերու միացած է մարմոյ
հետ, այնու ամենայնիւ կարող ենք
տսել, որ մարմինն ու իմացականու-
թիւնն իրարու համանման չեն, իրար-
մէ առաւելութիւն ունին: Այսպէս
եւս պիտի ըստ զարմանաք քնաւ, երբ
ասենք որ բարյական սկզբունքն, թէ
և սերտիւ միացած է իմացական սկզբ

բունքին հետ, բայց միշտ բարձր է
իմացականէն:

Իմացականութեան յարաբերու-
թիւնն բարյականութեան նկատմամբ
նցն է, ինչ որ է մարմոյ յարաբերու-
թիւնն իմացականութեան նկատմամբ: Սարմինն է գործի իմացականութեան
և իմացականութիւնն կամ միտքն է
գործի բարյականութեան: Կարող ենք
ասել նաև, որ մարմինն ու իմացակա-
նութիւնն թէ և իրարու անհաւասար,
բայց թէ մին և թէ միւսն երկրպեանն
խիստախն, երկու գործի են բարյակա-
նութեան: Ուրեմն բարյականու-
թիւնն է նպատակ և մարմինն ու ի-
մացականութիւնն են միջոցք: Արդա-
րեւ կարեւոր միջոցներ են. բայց ընդ-
նմին և պարզ միջոցներ: Այսպէս խօ-
սելով ես տակաւին այնչափ հեռի չեմ
երթար, ինչպէս գնացած է Ս. Գիլքն,
ասելով. « ՅԱստուծոյ երկիր և զպա-
տուիրանս նորա պահեամ, այս է մար-
զըն բովանդակ»: Եթէ այս է բովան-
դակ մարդն, հապա ինչ է միւս մնա-

յեալն . սակայն մենք կը հասկնանք Սուրբութեանի միտքն . բովանդակ մարդ ասեւ լով կը յայտնէ նա միանգամայն մարդոց վախճանը , նորա գոյութեան պատճառն ու նպատակն , նորա փառքն առաջի Աստուծոյ :

Աստուծածային Սէրն Յիսուս Քրիստոս , այն գինն՝ որ հատոց մեր փրկութեան համար , նոյն գնով անշուշտ պիտի գներ կամ փրկէր թէ մեր իմացականութիւնն կամ միտքն և թէ մեր սիրան : Բայց ինչէր մեր Փրկչի բուն գալատեան նպատակն : Եկա՞ւ նա արդեօք քաւել մեր մտաց դատողութեան սխալներն ու մոլութիւններն , թէ քաւել մեր կամաց զառանցանքներն : Եկա՞ւ նա արդեօք ուղղի խորհիւ ուսուցանել մեզ , թէ ուղղի գործել : Կամեցաւ նա արդեօք իմաստուններ առնել զմեղ , թէ սուրբեր : Այն հարցմանց պատասխանն , լիովին կը հաստատէ այն ճշմարտութիւնն , զորկառաջարկեմ ձեզ . եւ ես վատահեմ , որ ձեր խիղճն եւս պիտի վկայէ

այս բանին : Մարդոց փառքն կամաց աւզութեան եւ բարեոր դործածութեան մէջ է . իսկ իմացականութեան փառքն է ծառայել բարցականն սկըզբունքի յաղթանակի համար , այսինքն , թէ մարդոց մարմինն և թէ միտքն միակ նպատակ պիտի ունենան բարցականութեան սկզբունքն թագաւորեցը նել :

Արդ՝ հարկ չէ ամենեւին հաստատել այսօր երկար փաստերալ թէ իմացականութիւնն ՚ի վեր է քան զնիւթիւնն , թէ եւ նիւթն յաղթող կը հանգիսանց շատ սրտերու մէջ և նաեւ շատ տեսական գրուածոց մէջ . բայց աւելի հարկ է գիտութեան և մտաց հապարտութեան կամ իմացականութեան բուռն եռանդն սանձել : Պէտք է ասել ինչպէս նիւթապաշտներուն , որ իրենց նիւթապաշտութիւնն ապականութիւնն է , նյուպէս պէտք է ասել եւ իմացականութեան սիրահարներուն , որ իմացականութիւնն ՚ի վեր գասել քան զբարցականութիւնն աւ

պականութիւն է : Պէտք է ասել որ
ամենէն մոտաւոր մարդն, եթէ առանց
բարոյականութեան է, ոչ այլ ինչ է,
եթէ ոչ իմացական կենդանի : Պէտք
է ասել, որ անբարոյական իմացա-
կանութեան յաղթանակներն ամենեւ-
լին տարբերութիւն ըռնին՝ անաս-
նական ուժոյ եւ մարմնաւոր գորու-
թեան յաղթանակներէն : Պէտք է ա-
սել, որ մոտաց և հանձարց վերայ շա-
փազանց գարմանալն, նոյն սկզբունքէն
կը բղսի, ինչ որ է յանկութիւնն աչայ,
զոր Առաքէալն կը դատապարտէ ընդ-
ցանկութեան մարմնոյ և ընդ ամբոր-
տաւանութեան աստի կենաց :

Ցաւօք սրտի պիտի տուեմ, որ մի
քանի երկիներու մէջ միտքն և հան-
ձարն մեծ առաւելութիւն ստացան
են, եւ վարուց ապականութիւններն
ընդ քողով ծածկուած : Իմացականու-
թեամբ կամ մոքով ըստ զարդացած
մարդն թշուառ եւ տըրմելի կը հա-
մարուի ընկերութեան մէջ. իսկ մոտա-
ցին և հանձարեղն թշուառ չեն, եւ

ամեն տեղ կ'որոնուին : Սակայն ուրիշ
աչքով կը նային այն մարդոյ վերայ,
որ վատ վարք ըռնի, և ամենեւին վատ
օրինակ ըստ տար այլոց : Մինչեւ անգամ
կը համարձակին ասել որ կանոնաւոր
բարոյականն անհաշտելի է հանձարոյ
հետ, և թէ շատ հանձար և շատ ա-
ռաքինութիւն ունենալու համար շատ
բան պէտք է անել :

Ներկայ Ժամանակիս մոտաւորական
յաղթանակներու արբեցութիւնն այն
չափ սարսափ կ'ազդէ ինձ, որչափ ընդ-
հանրապէս սարսափ կ'ազդէ նիւթա-
կան վայելչութեանց անձնատուր լի-
նելու միտումներն : Այս պատճառաւ
ահա կը փափաքիմ ձեր հայեցուածքն
դէպ ՚ի այն կողմն դարձնել, ուր կա-
մեցաւ դարձնել մեր աստուածային
Վարդապէտն իւր տշակերտաց նայ-
ուածքն : Ավագ աղքատ այրի Աւետա-
րանի, ով խնարհ կին, զոր Փրկիչն
աշխարհի մի խօսքով յաւիտեան հրո-
շակեց աշխարհի վերայ . ով երջանիկ
կին, ձգէ դարձեալքո լումայն . ձգէ,

թափէ արտասուացդ հետ խառնուած քրտինքդ մարդասիրութեան գանձանակին մէջ : Ասա՞ մեղ, եթէ համեստութիւնդ կը ներէ քեզ, ասա՞ մեղ, ինչ հոգեկան շարժում էր այն շարժումն, որ սիրադ յուղեց և աղքատ ձեռքդ շարժեց, ինչ որ ունէիր, ուրիշ աղքատներու նուիրելու : Մի լոկ լումայ չէր այն, այլ քո բողոք կեանքդ էր : Մեր աչքերն կշտացած են երեւելի տաճարի շքեղութենէն և մեծութենէն . բաց մեղ քո հոգւոյդ սրբավայրն, քո հոգւոյդ տաճարն, ով կին, և ցոյց մեղ ուրիշ շքեղութիւններ : Ցոյց մեղ քո վկտերդ, որոնք ուղղորմածութեան փոխուած են . ցոյց մեղ քո թշուառութիւնդ, որ աչք կը տայ քեղ այլոց թշուառութիւնն տեսնելու : Այնպէս արա՞ , որ կարդանք քո սիրադ, որ մարդասիրութեան պատուէրն իրեն կը վերադրէ, մինչդեռ այն աւելի հարուստներուն կը վերաբերի քան թէ աղքատներուն : Ասա՞ մեղ, ինչ քաղը երախտագիւ

տութիւն կը զգաս առ Աստուած, որ քեղ մի լումայ տուածէ : Յայտնէ մեղ աշխատանացդ այն գաղտնիքն, որով ստացած ես այն լումայն, այն աղօթքն, որով ձեռք բերած ես զայն, այն երջանիկ և վշտալի կեանիքն, այն յօգնութիւններն, այն անձնամոռ ժումկալութիւնն, որով պահպանած ես զայն լումայն : Մասն և բաժին հանիր մեղ այն փառաւոր հաղորդակցութենէն, որով ճաշակած ես Աստուածոյ միոթարութիւնն քո չքաւորութեան մէջ : Այս, կը փափաքիմ ես, կարօտ եմ ես, աչքերս հանգատացնել աշխարհիս անցաւոր շքեղութեանց նայելէն և ականջներս անդորրացնել աշխարհիս աղաղակիներն ու բոմբիւններն լսելէն : Խշանութեան փառաւորութիւնն, մտաց փառամոլութիւնն և այլ ամբարտաւան ու բարբարոս փառաւորութիւններ ընդարձակացուցած են զիս և թալկացուցած : Աիրոս ծարաւի է իւրական և ճշմարիտ հիւթոյ . եւ այս ճշմարիտ հիւթն ու իրականութիւնն

քո սրտիդ մէջ կը աւեսնեմ, ով աղշքատ կին, քանզի կը աւեսնեմ, որ մարդիկ ձգած են, բայց Աստուած այցելութիւն եկած է քեզ: Բայց աւելի քո մօտ կը աւեսնեմ իմ պապակս զուվացնող ջուրն յաւիտենական, ով Փրկիչդ իմ Յիսուս, քո մօտ, որոյ տեսմին անարդ է և նուազեալ քան զամենայն որդւոց մարդկան, և որ ինքնին ասացեր, “Որդն եմ ես և ոչ մարդոց, և սակայն դու ինքն ես Տէր ՚ի փառս Աստուծոյ Հօր”:

Այս, այն, միայն Յիսուսի Քրիստոսի մէջ է, որ մարդինն ունախնացած է և հոգին ախրապետած, ամենայն մեծութիւն բացակայ է և միայն կ'երեւի ճշմարիտ մեծութիւնն, հոգւոյ մեծութիւնն: Արտաքուստ քան մի չըկայ նորա վերաց, որ փափաքիմք տեսնել, չըկայ գեղեցկութիւնն, և տեսիլ նորա անարդ է քան զամենայն որդւոց մարդկան, չըկայ գքեղութիւնն, չըկայ փառաւորութիւնն, բայց կայ մեծութիւնն, կայ գեղեցկութիւնն, զոր փո-

խանակ պէսնելու պէտք է զիալ: Փակեացէք ձեր մարմնոյ աչքերն, բայց էք հոգւոյ աչքերն և ասացէք Պատքալի հետո. “Ո՛չ, Բ'նչքան փառաւոր ես Յիսուս, Բ'նչքան շքեղ և սրանչելի է քո գալուստդ սրտի աչքերու համար, որք կը տեսնեն զիմաստութիւնն: Ահա սիրոն է Ճշմարիտ տաճար Ճշմարտին Աստուծոյ: Մարմարոնեայ տաճարն, ոսկեզօծ և փողփողիւն տաճարն, ձեր աչքերն կը գրաւեն եւ կը հեռացնեն կենդանի տաճարէն, ուր կը բնակի լրումն Աստուածութեան: Կարող էք դուք ուրիշ բանի նայիլ, քանի որ Մարդասիրութիւնն սրտի տաճարի մէջն է: Մարդասիրութիւնն է փառք հոգւոյն, փառք մոտաց. նա է միան գամայն փառք Աստուծոյ. և այն մարդըն, որոյ մէջ կը բնակի գերադայն մարդասիրութիւնն, այն մարդն կը ներկայացնէ նաև գերագայն մեծութիւնն ու գեղեցկութիւնն: Ահա այս մեծութեանն պէտք է նայիլ ահա այս գեղեցկութիւնն պէտք է նայիլ յաւիտեան:

Արդ՝ կը հաւատամ՝ ես, որ լաւ
համոզված ցաք թէ այն մարդիկն, ո-
րոնք Յիսուսի Քրիստոսի աչքով նայած
են կենդանի և մարմարացեալ մարդա-
սիրութեան վերայ, նոքա բնաւ երբէք
կամեցած չեն ուրիշ բանի նայիլ: Դուք
եւս կը վկայէք, որ զՅիսուս Քրիստոս
տեսմով նաղերն և ճաշակովներն միշտ
ցաւակցութեամբ նայած են այն մար-
դոց վերայ, որոնք չեն նայիր Յիսուս
Քրիստոսին, այլ կընային նիւթյուն, կընային
արտաքին շքեղութեան և խորասուղ-
ուած են մոտց ամբարտաւանութեան
մէջ: Յաւիտենականութեան նկատ-
մամբ դաշտի ծաղիկն տեւողութեամբ
եւ մեծութեամբ հաւասար է՝ ամեն
բարձրացն և հյուակագ յիշատակա-
րաններուն, իմացականութեան ամեն
վսեմ խորհուրդներուն և ծնունդնե-
րուն, վասն զի տիեզերական ալեկո-
ծութեան մէջ ամենայն ինչ ոփիտի կո-
րընչի, ինչ որ միացած չէ Աստուծոյ
հետ, և Աստուած միայն է՝ ի վեր քան
զամենայն ալեկոծութիւն: Ամեն բան

պիտի կորնչի, և նոյն իսկ ձեր մոտա-
ծութիւններն ու խորհուրդներն ան-
գամ, եթէ միացած չեն Աստուծոյ
հետ:

Ով Բուրգեր, կամ մոտաց դրու-
թիւններ և սիադեմներ, ով ալեւոր
լեռներ, ով քան զամենայն լերինտ
բարձրագոյն երագիներ եւ ցնողներ,
դուք պիտի կորնչիք համանգամայն:
Վասն զի Աստուած միայն է անմահ
և իւր անմահութիւնն նոյն միայն կը
հաղորդէ, որոնք համանման են իրեն,
որոնք միացած են իրեն հետ: Հնազան-
դութիւնն խոնարհութեամբ, հնազան-
դութիւնն սիրով, ահա այս է, որ չը
կորնչիր յաւիտեան: Բնութիւնն իւր
տուած պարզեւներն յետ կ'առնու,
միայն չնորհաց պարզեւներն են, որ
անմահ են եւ յաւիտենական: Ամեն
արտաքին գեղեցիկութիւն կը լուծուի,
կ'անհետի: սրտի գեղեցիկութիւնն է
միայն, որ չը թառամիր, այլ միշտ կը
ծաղկի և կը փթթի:

Այսպէս և այս իմաստով ահա Յի-

առւս Քրիստոս քարոզեց կեանք և ան
մահութիւն . այս իմաստով Քրիստո-
նէութեան մեծութիւնն առւաւ ամեն
բանի իւր Ճշմարիտ արձէքն , թէ երեւ
աելեաց և թէ աներեւութից : Քրիս-
տոնէութեան այն յատկութիւնն այն
չափ ակներեւ է և յայտնի , որ անհրա-
նար է ուրիշ կերպիւ հասկնալ և ըմ-
բռնել Քրիստոնէութիւնն , եթէ ոչ
իբրեւ թագաւորութիւն հոգւոյ , եւ
իբրեւ յաղթութիւն անտեսանելցն և
աներեւութին : Բայց գիտենք , որ Քր-
իստոնէութիւնն ձեւ կամ մարմին ա-
ռաւ աշխարհիս մէջ . նա տեսանելի
եղաւ : Աշխարհներէ անցաւ , դարե-
րէ անցաւ , երկրիս վերայ զինքն ստաշտ-
պանեց և այն բաներու մէջ տեղ գը-
րաւեց , որոց վերայ աշխարհն կը նայի
և կը տեսնէ : Այս տարածութեան և
տեւականութեան մեծութենէն զատ
Քրիստոնէութիւնն ունի հոգեւոր եւ
իմացական մեծութիւն : Նա մեծ է
իւր ծնած եւ ներշնչած գաղափարնե-
րով , մեծ է իւր քարոզած իմաստու-

թեամբ , որով և գրաւած է ամեն վլա-
սեմաթուիչ մտածովներու զարմացու-
մըն : Այսպէս ուրեմն , Քրիստոնէու-
թիւնն մեծ է նոյն խակ ըստ եղանակի
մտածութեան աշխարհի : Բայց պէտք
է զգուշանանք այս եղանակաւ Քրիս-
տոնէութեան վերայ զարմանալու :
Պէտք է զգուշանանք , որ Քրիստոնէու-
թեան Ճշմարիտ մեծութիւնն մեր
տեսութենէն չը խուսափի : Չը թու-
զունք , որ մեր նայուածքն խոտորի ու-
մոլորի և չը պարտաւորենք զՅիսուս , որ
զմեզ յանդիմանէ . “ Այդ բանին կը
նայիք . այդէ , որ կը զարմանէ զձեզոյ :
Ի՞նչքան թշուառ պիտի լինէինք մենք ,
եթէ այն նպատակաւ միայն մոնէինք
աներեւոյթ թագաւորութեան մէջ , որ
պէս զի աւելի սերտ և ապահով կասդով
կապուէինք տեսանելի աշխարհի հետ ,
և նոյն խակ հոգւոյ թագաւորութեան
մէջ ուրիշ բան չը գտնէինք , այլ միայն
զաշխարհ , իւր ամեն յօժարութեամբ
և ցանկութեամբ : Ի՞նչքան թշուառ
պիտի լինէինք մենք , եթէ Եբրայեցի

Ժողովրդին նման մեր բոլոր յօցն գը-
նէինք այս ունայն և դատարկ խօսքեւ-
րուն վերայ . “ Տաճար Տեառն , տա-
ճար Տեառն , տաճար Տեառն ո . Եթէ .
է . 4 . Եւ ամենեւին չ'ուղղեինք մեր
ճանապարհն ու գնացքն : Եթէ մի մի
այն Քրիստոնէութեան նիւթական և
մտածորական կրինակի մեծութեանն
նայինք , այս կը նշանակէ խակապէս մեր
աչքերն քարերուն սեւեռել , ինչպէս
սեւեռեցին տաճարի քարերուն վերայ
Յիսուսի աշակերտաներն : Ընդարձակ
մտածութիւններն , դարաւոր աւան-
դութիւններն , փառաւոր յիշատակ-
ներն , առանց Քրիստոնէութեան ճըշ-
մարիտ ոգւց , անշունչ քարեր են ,
ցուրտ նիւթեր , կարծր նիւթեր , ան-
կենդան նիւթեր : Բայց կան ուրիշ քա-
րեր , կան կենդանի քարեր , որք իրա-
րու հետ միանալով կը կազմեն հոգեւոր
շնուրածն և սուրբ քահանայութիւնն .
“ Եւ դուք իրերւ զլէմն կենդանիս շե-
նիք տաճար հոգեւոր՝ յանարատ քա-
հանայութիւն , մատուցանել զհոգե-

ւորն պատարագո՞ հաճցյս Աստուծոյ
ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ո : Ա. Պէտ-
ք . 5 : Անշուշո՞ սոյն կենդանի քարե-
րէն էր այն այրի կինը , որոյ առատա-
ձեռն ողբրմաւթիւնն նշմարեց Յիսուս
Քրիստոս : Սցն քարերէն են ամեն ան-
կեղծ և խոնարհ հոգիներ , որ ապաշ-
խարութեամբ նոր կեանք ստացած են ,
կեանք ծածկեալ ընդ Քրիստոսի յԱս-
տուած : Այս կենդանի քարերէն են
այն հոգիներն , որոնք թերեւս Աստու-
ծոյն տալրւ համար ուրիշ բան չունե-
նալով իրենց անձն տուած են սիրով
և հաճութեամբ : Ահա այս գեղեցիկ
քարերուն , այս շքեղ մարմարիննե-
րուն պէտք է որ նայինք : Որոնենք ու-
րեմն սոյն քարերն . որոնենք այս աղմբ-
կալից աշխարհի մէջ . որոնենք աս-
տուածպաշտութեան արտաքին փա-
ռաշուք ձեւերու տակ . որոնենք հո-
յակապ տաճարներու մէջ խոնուած
քաղմութեան սրտերու մէջ . որոնենք
և գտնենք այս գաղտնի մեծութիւնն ,
այս գաղտնի աշխարհն , այս ստորեր-


կրեայ բնակարանն , այս խոնարհութեան գետնսափորներն , ուր ՚ի լուսութեան կը կատարուի հոգւով և ճշմարտութեամբ երկրպագութիւնն և ուր կը փառադրուի անարատ եւ սուրբ կրօնն : Այս որոնման մէջ կ'սպասէ ահա մեղ հոգեւոր տեսարան , որց գեղեցկութիւնն կը յափշտակէ մեր սիրտն : Խոնարհութիւնն , ներողութիւնն , ողբրմութիւնն , ապաշխարութիւնն , աղօթք , վստահութիւն առ Աստուած , քաղց և ծարաւ արդարութեան , նախանձաւորութիւն վասն աստուածային փառաց , սոքա են ահա ճշմարիտ տաճարի , ճշմարիտ սրբավայրի գեղեցկութիւնն ու շքեղութիւնն : Աւելի կը փայլի և կը շողոզայ սոյն շքեղութիւնն , երբ ներկայացուցիչն մի աղքատ է , մի գերի , մի տըգէտ , մի մանուկ կամ մի շարագործ , որ զղալով Աստուծոյ ողբրմածութեան դիրկը դիմած է : Այս , որչափ հեռի է տակաւին մեր սրտէն ճշմարիտ մեծութեան սէրն . քանի՞ քանի անդամաղքա-

տութիւնն , տրամութիւնն կը ծածկեն մեր աչքէն սոյն ճշմարիտ գեղեցկութիւնն և կը արտուցանն զմէլ : Ի՞նչ պէս կը յօժարինք մենք մնալ այն տեղ , ուր է աղազակ և ամբարտաւանութիւն աշխարհի : Ի՞նչքան մարմնաւոր ենք մենք տակաւին և ի՞նչքան անպատճառ ենք Աստուծոյ թագաւորութեան համար , որ է թագաւորութիւն հոգեւոր : Դեռ որչափ փոփոխելու կարօտութիւն ունինք . որչափ մեծնալու եւ նաեւ վերածնելու : Մեր զօրութենէն վեր զօրութիւն , մեր մարդկային կարողութենէն վեր մի կարողութիւն միայն կարող է բարձրացնել զմեղ մինչեւ այն տեսութեան կէտն , ուսափ ամենայն ինչիւր գրութեամբ կ'երեւի , փոքրըն՝ փաքք և մեծն՝ մեծ : Խնդրենք ուրեմն այն վերին կարողութենէն , որ կը տնօրինէ ամենայն ինչ , որ կը տնօրինէ ներկայն և ապագայն , որ Տէրն է յաւիտենականութեան . խընդընէնք որ ինչպէս ուրիշներուն տուած

է, մեզ ևս տայ սրաի աչքեր, որ կա-
ըողանանք Խմաստութիւնն տեսնել:



1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
660
661
662
663
664
665
666
667
668
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
770
771
772
773
774
775
776
777
778
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
880
881
882
883
884
885
886
887
888
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
980
981
982
983
984
985
986
987
988
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
1000



1808

ՀՀ Ազգային գրադարան



NL0331425

ՀՀ Ազգային գրադարան



NL0331423

ՀՀ Ազգային գրադարան



NL0331428

ՀՀ Ազգային գրադարան



NL0331427

ՀՀ Ազգային գրադարան



NL0331426

ՀՀ Ազգային գրադարան



NL0331422

ՀՀ Ազգային գրադարան



NL0331421

ՀՀ Ազգային գրադարան



NL0331420

